Տեղեկատվություն

2024 թվականի հուլիսի 26-ին Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հայտարարել է բաց մրցույթ՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտորի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Մրցույթին մասնակցելու համար դիմումները (փաստաթղթերը բնօրինակներով, իսկ էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում՝ փաստաթղթերը բնօրինակների սկանավորված տարբերակներով) **հուլիսի 29-ից օգոստոսի 28-ը** ներառյալ, ժամը 10:00-ից - 17:00-ը (բացի շաբաթ և կիրակի օրերից), ներկայացվել են Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության անձնակազմի կառավարման վարչություն:

Ռեկտորի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված բաց մրցույթին մասնակցելու համար դիմել է 4 թեկնածու:

N	Հավակնորդի ազգանունը, անունը, հայրանունը	Ծննդյան ամսաթիվը և տարին, ծննդավայրը	Գիտական աստիճանը	Գիտական կոչումը	Զբաղեցրած պաշտոնը
1.	**Գրիգորյան Արմեն Վարդանի**	30.03.1981, ՀՀ, քաղաք Երևան	տնտեսագիտության թեկնածու	դոցենտ	Հայաստանի պետական տնտեսագիտական համասարանի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար, համատեղությամբ մարքեթինգի ամբիոնի դոցենտ
2.	**Ղազարյան Էդգար Ֆերդինանդի**	20.10.1975, ՀՀ Վայոց ձորի մարզ, քաղաք Վայք	տնտեսագիտության թեկնածու	դոցենտ	չի աշխատում
3.	**Մարգարյան Ատոմ Շավարշի**	22.04.1961, ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Լճաշեն	տնտեսագիտության թեկնածու	դոցենտ	Հայաստանի պետական տնտեսագիտական համասարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի «Ինովացիոն

					և ինստիտուցիոնալ հետազոտություններ» գիտաուսումնական լաբորատորիայի ղեկավար, համատեղությամբ տնտեսագիտության տեսության ամբիոնի պրոֆեսոր
4.	**Պետրոսյան Արսեն Արամի**	16.08.1983, ՀՀ, քաղաք Երևան	տնտեսագիտության թեկնածու	դոցենտ	Հայաստանի պետական տնտեսագիտական համասարանի ուսումնական բաժնի պետ, համատեղությամբ տնտեսագիտության տեսության ամբիոնի դոցենտ

Հանրապետության նախագահ, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի նախագահ Վահագն Խաչատուրյանի առաջարկությամբ՝ առաջնորդվելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտորի ընտրության ընթացակարգի դրույթներով, **2024 թվականի սեպտեմբերի 6-ին ժամը 15:00-ին** հրավիրվում է «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի նիստ, որը տեղի կունենա ՀՊՏՀ նիստերի դահլիճում (հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Նալբանդյան 128, կենտրոնական մասնաշենք, 3-րդ հարկ)։